

ՀԵՆՐԻ ՇԱՊԻՐՈ

Փրինսթոնի համալսարան

ԳՐԻԳՈՐ ԴԱՐԱՆԱԳՅՈՒ «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ» ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Գրիգոր Դարանաղցու՝ 1634-1640 թթ. գրված «Ժամանակագրություն» աշխատությունը բազմաթիվ պատմաբանների համար եղել է ԺԷ. դարի քաղաքական ու եկեղեցական պատմության սկզբնաղբյուր, սակայն նրանցից եւ ոչ մեկն ըստ արժանվույն չի գնահատել այս աշխատության բացառիկությունը, լիարժեք չի ներկայացրել նյութը:

Ջալալիների շարժման մասին «ստույգ տեղեկություններ» գտնելու համար Մ. Զուլայանն օգտվել է «Ժամանակագրության» «ամենակարևոր» էջերից¹: Ստամբուլի համալսարանի հայ պատմաբան Հրանտ Անդրեասյանը թուրքերեն է թարգմանել «Ժամանակագրության» որոշ հատվածներ՝ ջալալիների, Աբազա փաշայի եւ ջալալիներից փախած գաղթականներին հետ ուղարկելու վերաբերյալ². այս հատվածների թարգմանությամբ նա փորձել է ընդգծել «Ժամանակագրության» կարեւորությունը օսմանյան պատմության ուսումնասիրման համար՝ միևնույն ժամանակ անտեսելով ու բաց թողնելով աշխատության մեծ մասը: Գեորգ Բարդակյանը³ եւ Մարկուս Ռահներ⁴ եւս օգտվել են «Ժամանակագրության» որոշ էջերից՝ ԺԷ. դարի հայկական եկեղեցական պատմությունն ուսումնասիրելու նպատակով: Այս աշխատությունը շատ հեղի-

¹ Մ. Զուլայան, Ջալալիների շարժումը եւ հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (ԺԶ.-ԺԷ. դարեր), Երևան, 1966, էջ 30. տե՛ս Զ. Անասեան, Մայր երկեր, Թուրքական տիրապետութիւնը Հայաստանում ԺԷ. դարում, Լոս Անջելես, 1987, էջ 501-517:

² H. Andreasyan, Bir Ermeni Kaynağına Göre Celâli İsyanları, İstanbul Üniversitesi Edebiyat Fakültesi Tarih Dergisi, s.13, İstanbul, 1963, s. 27-42. H. Andreasyan, Abaza Mehmed Paşa, Tarih Dergisi, s. 13, İstanbul, 1967, s. 131-142. H. Andreasyan, Celâlilerden Kaçan Anadolu Halkinin Geri Gönderilmesi, İsmail Hakkı Uzunçarşılı'ya Armağan, Ankara, 1976, s. 45-53.

³ K. Bardakjian, The rise of the Armenian Patriarchate of Constantinople, Christians and jews in the Ottoman empire I, New York, 1982, p. 89-100.

⁴ M. Rahn, Die Entstehung des Armenischen Patriarchats von Konstantinopel, Hamburg, 2002, S. 85-89.

նակների համար տարատեսակ մանրամասնությունների հիմք է հանդիսացել, սակայն որևէ մեկը ամբողջական քննության չի ենթարկել այն⁵:

Ավելին՝ ոչ միայն ժամանակակից հետազոտողները, այլ անգամ «Ժամանակագրության» բնագիրը կազմողը դուրս է թողել մեկ հատված⁶: Մերոպ Նշանյանը տպագրված տարբերակում չի ներառել «Ժամանակագրության» բնօրինակ ձեռագրի երկու էջերը, որոնք մի հայ հերձվածողի մասին են. նա այս բացթողումը հետևյալ կերպ է բացատրում. «...հատուածիս մէջէն մաս մը յապաւեցիմք կարի առասպելապատում պարունակութեանը համար...»⁷: Այս էջերը մահմեդական ավանդույթի նշանավոր «Սատանայական քառյակներն» են հիշեցնում:

Այս հոդվածի նպատակը «Ժամանակագրության» անտեսված որոշ հատվածներին անդրադառնալն է. դրանք հիմնականում հերձվածողների, մեղսագործների ու կեղծ քահանաների մասին են: Կխտսենք հինգ պատումների մասին, ապա՝ կփորձենք մանրամասնել, թե որքանով էին դրանք կարևոր Հայոց պատմության համար՝ նկարագրելով պատմական շարակարգը: Հոդվածին կից կներկայացնենք վերոնշյալ ձեռագրի չտպագրված երկու էջերի թվային տարբերակների լուսանկարները⁸ եւ բնագրի վերծանումը⁹:

Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրության» հինգ պատումները. Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրությունը» բաղկացած է երկու մասից. պատմաբանները անտեսել են հատկապես երկրորդ մասը: Այս հատվածում, քաղաքական ու ռազմական պատմությունների համեմատ, շատ կան կեղծ քահանաներին, մեղսավորներին ու հերձվածողներին վերաբերող պատումներ, ինչն էլ այդ հատվածները շրջանցելու պատճառ է դարձել: Սակայն այս պատումները չափազանց կարևոր են ԺԷ. դ. օսմանյան եւ հայկական պատմությունը հասկանալու համար:

⁵ Ա. Ութուջյան, Գրիգոր Դարանաղցին Մ. Չամչյանի Պատմության աղբյուր, ԼՀԳ, թ. 2, 1975, էջ 81-89. Հ. Պերպլերեան, Գրիգոր Դարանաղցիի դժուարինաց մէկ հատուածին մասին, «Սիոն», թ. 9, Երուսաղէմ, 1951, էջ 273-274. Նույն հեղինակի՝ «Ալիի դաշնագիր»-ը Գրիգոր Դարանաղցիի «Ժամանակագրութեան» մէջ», «Սիոն», թ. 10, Երուսաղէմ, 1951, էջ 302-304, թ. 11, Երուսաղէմ, 1951, էջ 330-331:

⁶ «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամալսեցոյ կամ Դարանաղեցոյ», Երուսաղէմ, 1915:

⁷ Անդ, էջ 440:

⁸ Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Տ. Գրիգոր վրդ. Մագսուտյանին՝ Երուսաղեմում գտնվող բնօրինակ ձեռագրի չտպագրված էջերը պատրաստակամությամբ լուսանկարելու եւ մեզ տրամադրելու համար:

⁹ Բնագրի մեր վերծանումը սրբագրեց ՄՄ գիտաշխատող եւ ձեռագրագետ Տաթևիկ Մանուկյանը, ում հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

Այսպես՝ հերձվածողներին վերաբերող պատումներում Գրիգոր Դարանաղցին հատկապես պախարակում է Հովհաննես անունով մի հարբեցողի: Հովհաննեսը «գինամոլ եւ յոյլ եւ ծոյլ այր մի էր՝ որդի մեծատան, եւ եղեւ անգործ եւ գինամոլ եւ անառակութեամբ շարժէր, նա՛ հայրն վարեց ի տանէն, նա այժմ այդպէս կառնէ խարէութիւն...»: Հովհաննեսը շրջում էր գյուղից գյուղ, խաբում ե՛ւ հայ, ե՛ւ թուրք գյուղացիներին՝ պատմելով իր հորինած հերետիկոսական պատմությունները. «Տեսի գՍուրբ Յովհաննէս Մկրտիչն եւ զԱստուածամայրն մօտ Աստուծոյ եւ տեսի զԼուսաւորչի հայրն ի մէջ դժոխացն, եւ խնդրեցի յԱստուծոյ եւ ազատեցի, հանի ի դժոխացն»: Գյուղացիները ուշադրությամբ լսում էին այդ պատմությունները եւ հավանություն տալիս դրանց, առավելապէս «կանայք բազումք շուրջ գնովաւ շեղջակուտեալք...»: Սակայն, երբ Գրիգոր Դարանաղցին հանդիպում է Հովհաննեսին, բնավ չի հանդուրժում նրա լկտի պահվածքը. «...եւ ես այլ յարեայ եւ առի բիր մի եւ շատ մի գանալից արարի զինքն եւ հազիւ կարացին առնուլ ի ձեռանէս եւ փախուցաք ի գեղջէն...»¹⁰:

Գրիգոր վարդապետը նաեւ բարկանում էր կեղծ քահանաների վրա եւ բազմաթիվ պատումներում նկարագրում «սուտ իրիցութիւն եւ քահանայութիւն»¹¹ անողներին: Այսպէս՝ նա բացատրում է, որ «...ոմն աշխարհական Աբրահամ անուն՝ զամենայն ուսումն մանկութեան՝ գՍաղմոս եւ զՇարականն քաջ գիտելով, երեսուն ամ քահանայագործութիւն առնէր աշխարհական գոլով եւ ոչ մէկ աստիճան չունելով՝ ի կողմ Նիկոմիդացւոց... ի հայոց գեղօրէք...»: Մի գյուղացուց Գրիգոր Դարանաղցին լսել էր, թե ինչպէս էր այս մարդը քահանայի դեր ստանձնել Արեւելյան Անատոլիայից փախչելիս. «Յորժամ ի սիւայու վայր կու գայք, նա՛ կինն ի ճանապարհին մեռաւ, եւ վասն կարդացմունք գիտենալոյ, սարկաւագ կոչէաք: Եւ յորժամ ի Թոխաթու մօտերն եկաք, ինքն գնաց ի հայերացն հաց մուրանալ, եւ յորժամ եկն ի մուրացութենէն, նա՛ յորժամ սարկաւագ եւ տիրացու անուն կոչեսցի ըստ հանապազորդ սովորութեանն. նա ոչ կամեցաւ կոչել զիր սովորական անուն, ասաց ինձ, թե՛ այլ մի՛ ասէր ինձ սարկաւագ եւ տիրացու, այլ երէց եւ տէր կոչեա՛ զանուն իմ, զի ի մուրանալն ասացի թե՛ քահանայ եմ, նա՛ առատ տուրս տային եւ պատուով ընդունեցին ի մուրանալն... Եւ յորժամ եկաք յայս կողմն, նա բաժանեցաւ յինէն եւ գնաց յանձանօթ տեղրանք, յայն ժամանակէն ի վեր քահանայութիւն կառնէ եղէր, որ յայնմ հետէ մինչեւ ցայժմ երեսուն ամաց մերձ է...»: Ապա՝ «...այս

¹⁰ Գրիգոր Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 443-444:

¹¹ Անդ, էջ 473:

գրոյց համբաւեցաւ յամենայն տեղիսն գիտողացն գնա, եւ այլ ոչ ընկալան գնա իբրեւ զքահանայ կամ սարկաւագ, այլ արտաքսեցին ի գեղջէն յորում կայր՝ իբրեւ գաղը անպիտան...»¹²:

Գրիգոր Դարանաղցին, բացի կեղծավորներից ու հերձվածողներից, գանգատվում էր նաեւ մեղսագործներից, հատկապէս ատում էր ջուղայեցի առետրականներին: Ըստ նրա՝ «...են ամենեքեան շատաշուրջքն միապէս վէսք, ամբարտաւանք, սնապարծք, անգութք, անողորմք, աննուէրք, անպատիւք եւ բնաւ ոչ դնեն պատիւ ումեք, բայց յերուսաղէմացոց եւ էջմիածնեցոց՝ վասն փառասիրութեան աղագաւ...»: Մի անգամ Գրիգոր վարդապետը պատժում է որոշ ջուղայեցիների. «Ի յաղօթից տունն այլ թէ ննջեն, ի յաղօթից ժամն այլ չեն յառնէր յաղօթս կալ ընդ ժողովրդեանն, որպէս մեք էաք ի գիւղ մի Նիկիացոց... մեք էաք իջեալ ի տուն մի աղօթարանին, երեք չար եւ չիքեր ի նոցանէ [ջուղայեցիներից] եկին առ մեզ իջեւանեցան եւ ննջեցին, եւ յորժամ եղւի ժամ աղօթից, ոչ զարթոցի առժամայն՝ թէ աշխատեալք են. ասաք զաւուր Սաղմոսքն եւ զպատշաճ աւուրց Շարականներն եւ զաղօթնին, մինչ ի փառք ի բարձունն հասուցի, ի վերայ գլխնոյն եմք կանգնեալ, ոչ թէ ի խոր ի քուն լինելով, այլ արթնացեալ գաղտ հայելով, վասն առաւել թերահաւատութեանն ոչ կամին զԱստուած յիշել: Յորժամ ի փառք ի բարձունն սկսայ որ չելին՝ կարի յոյժ խռովեցաւ սիրտ իմ ի փորի իմում եւ զայրացայ եւ հարի գաւազանաւ զանօրէնութիւնս նոցա եւ տանջեցի ըստ անիրաւութեանն իւրեանց, եւ յարուցեալ գօտելոյժ եւ բացագլուխ եւ բոկ եւ մերկ փախսան արտաքս»¹³: Հեղինակը բազմիցս գանգատվում է ջուղայեցիների ազահոյությունից եւ անբարեպաշտությունից: Այդ ժամանակաշրջանում Անատոլիայի հոգևորականների ու Նոր Զուղայի առետրականների միջեւ նաեւ դասային հակամարտություններ էին ծավալվել:

Չորրորդ օրինակը վերաբերում է մի մեղավոր քահանայի՝ Նաղաշ Ղազարին: Նաղաշ Ղազարը մի հայ քահանա էր, ով վիճում էր Ռոտոսթոն քաղաքի մյուս հայ քահանաների հետ: Ըստ Գրիգոր վարդապետի՝ 1607 թ. Նաղաշը՝ վրեժով լցված, Ռոտոսթոյի դատավորին տեղեկացնում է, թե իբր հայերը «զքաղաքիս մարլմներացն կանայքն եւ զաղախնայքն զամենեսեան կու պղծեն»¹⁴: Դատավորը բարկանում է ու հրամայում. «...վայ այն մարլման եղածին եւ կամ եղու կաւուրին [տեղի քրիստոնյա], որ երից

¹² Անդ, էջ 477-478:

¹³ Անդ, էջ 465:

¹⁴ Անդ, էջ 109:

աուրց յետոյ երմանի անուն մարդ կամ կին մարդ ի տուն թողոյ վարձաւոր կամ անվարձ: Ի դուրս արարէ՛ք ի տանց ձերոց եւ հալածէ՛ք ի քաղաքէս եւ յամենայն սահմանաց ձերոց...»¹⁵: Բագում դժվարություններ հաղթահարելով՝ հայերը կրկին Ռոտոսթոյում հաստատվելու թույլտվություն են ստանում, սակայն հայ քահանաները չեն մոռանում Նաղաշի դավաճանության մասին: Գրիգոր Դարանաղցին Ստամբուլում փնտրում է Ռոտոսթոյից փախած Նաղաշին եւ եկեղեցում բանավիճում նրա հետ: Հեղինակը նկարագրում է. «...ոչ կարացաք հանդուրժել, այլ յարեայ, գաւազանաւ հարի գանգգամ լիբրն գայն եւ Տէր Սիմէոն աշակերտն մեր ընդ բռամբ եհար ընդդէմ բերանոյն եւ գլխոյն եւ ի դուրս եհան...»¹⁶:

Հինգերորդ օրինակը եւս մի հերձվածողի մասին է: Գրիգոր վարդապետը գրում է, որ «եղեւ այր մի դիւաբալս ի Սիլիսրայ քաղաքին՝ ուսեալ գամենայն ուսումն մանկութեան», եւ այս մարդու «կինն... մեռանելով, երկրորդ կին առնելով եւ ինքն ընդ ինքն գոջանալով եւ պահովք ապաշխարութիւն ստանալով եւ ելանելով ի յանապատ տեղի մայրեաց՝ իբր ճգնութիւն առնելով, անկիրթ եւ անվարժ ի ճգնութեան ճանապարհացն...»¹⁷: Հեղինակի վկայությամբ՝ այս մարդու՝ անապատական դառնալու ջանքերը բացարձակ աղետաբեր էին. իբր երկու ուրվականներ՝ «սուտ Յիսուսը» եւ «սուտ Տիրամայրը» այցելել ու խոսել են նրա հետ: Առաջին անգամ հայտնվելուց հետո «սուտ Յիսուսը» այդ մարդուն ասում է. «...եկաք խրատել զքեզ եւ լինել քեզ զօրաւիզ եւ տաց քեզ շնորհս եւ իմաստութիւնս եւ սքանչելի արարից զքեզ ի վերայ երկրի: Եւ արդ՝ ա՛ն քարտէզ եւ գրեա՛ գոր ինչ ասելոց եւ ցուցանելոց եմք քեզ՝ նշանս եւ արուեստս մեծամեծս եւ զբան պատուիրանապահութեանն, զոր ասելոց եմք քեզ, գրեա՛ եւ ընթերցի՛ր հանապազ յեկեղեցուջ...»¹⁸: Ի վերջո, այս մարդը «...ջանայր զԱւետարանն եւ զՃաշոցն արտաքս ձգել եւ գայն սուտ առասպել գիրքն ի տեղի Աւետարանին դնել եւ ընթեռնուլ ի լուր ամենեցուն իբրեւ գնոր Աւետարան», սակայն քահանաները բողոքում են¹⁹:

Ինչպես արդեն նշել ենք, Ի. դարասկզբին Մեսրոպ վարդապետ Նշանյանը, որ պատրաստել էր «Ժամանակագրության» տպագիր օրինակը, չի անդրադարձել բնօրինակ ձեռագրի երկու էջերին: Հոդվածին կից՝ առաջին անգամ հրատարակում ենք բնօրինակ ձեռագրի՝ Երուսա-

¹⁵ Անդ, էջ 110:

¹⁶ Անդ, էջ 116:

¹⁷ Անդ, էջ 436:

¹⁸ Անդ, էջ 438:

¹⁹ Անդ, էջ 440:

ղեմի Ս. Հակոբյանց վանքի Ձեռագրաց մատենադարանում պահվող Հ^մ 1069-ի 179թ-181ա էջերի թվային լուսանկարներն ու վերծանումը:

**Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրության» պատմական համա-
տեքստը.** Վերոհիշյալ պատումների անտեսումը հասկանալի է. դրանք
մեծ պատերազմների կամ եկեղեցական ժողովների մասին չեն, սակայն
եթե խորապես վերլուծվեն, պարզ կդառնա, որ դրանք եւս արժեքավոր
տեղեկություններ են հաղորդում հայերի ընկերային (սոցիալական) ու
հոգեւոր կյանքում տիրող իրավիճակի մասին: Դրանց կարեւորությունը
հասկանալու համար պետք է նկարագրվի այս աշխատության պատմա-
կան համատեքստը:

Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրությունը» գրվել է Ստամբու-
լում եւ Թրակիայում տեղի ունեցած մեծ գաղթից մի քանի տարի անց:
1604 թ. Գրիգոր վարդապետը գաղթական էր, ով Բաբերդից Ստամբուլ էր
փախել: Այնուհետեւ՝ 1607-ին գնացել էր Թրակիայում գտնվող Ռոտոսթո
քաղաքը: Արեւելյան Անատոլիայում ապստամբությունից եւ սովից փա-
խած հազարավոր գաղթականները, Գրիգոր վարդապետի նման, փոխել
են Ստամբուլի ու Թրակիայի ժողովրդագրությունը: Նշանավոր հայ հե-
ղինակ Սիմեոն Լեւիացին գրում է, որ 1608 թ., երբ եկավ Ստամբուլ, հա-
յերի մեջ «...ութսուն տուն տեղացի հագիւ գտանէր. բայց եկն եւ դարիպն
աւելի քան զքառասուն հազար տուն ի Ստամպօլ, Ղալաթա եւ Սկուտարն:
Քանզի յօթանախան Ճէլալիքն աւիրել էին. եւ ամենեքեան հալածեալք եւ
փախուցեալք անդ էին հանգուցեալք...»²⁰: Օսմանյան աղբյուրները ակ-
նարկում են, որ այդ ժամանակաշրջանում որոշ տեղերում առաջին ան-
գամ են հայ համայնքներ հիմնադրվել, ինչպես՝ Ռոթոստոյում²¹: Ըստ Հ.
Անասյանի՝ «...ջալալիների ապստամբության անմիջական հետեւանքնե-
րից մէկն էլ եղաւ հայ ժողովուրդի արտագաղթը իր հայրենի երկրից, ար-
տագաղթի այն մեծ հոսանքը, որն ամբողջովին ամայացրեց հայկական
նահանգները: Հայրենի երկրից փախչող ժողովրդական զանգուածները
ղէպի պանդխտութիւն դիմեցին հարիւր հազարներով, նոյնալիսի աննկա-
րագրելի պայմաններում»²²:

Կայսրության արեւելյան շրջաններից փախչելուց հետո, երբ հայ գաղ-
թականները հասել են Ստամբուլի մոտակա շրջանները եւ Թրակիա, հայ

²⁰ «Սիմեոն դպրի Լեւիացոյ Ուղեգրութիւն», Վիեննա, 1936, էջ 8:

²¹ H. Ateş, Kuzey Marmara Sahilleri ve Ard Alanında Şehirleşmenin Tarihi Süreci: XVI-XVII. Yüzyillarda Tekirdağ ve Yöresi, İstanbul Üniversitesi Tarih Anabilim Dalı Doktora Tezi, İstanbul, 2009, s. 159.

²² Յ. Անասեան, նշվ. աշխ., էջ 508:

հոգևոր կյանքի համար բավարար թվով եկեղեցիներ ու վանքեր չկային. այս խնդիրներին մի քանի դրվագով հանգամանորեն անդրադարձել է Գրիգոր Դարանաղցին:

Այսպես՝ երբ հայերը ԺԶ. դարավերջին եւ ԺԷ. դարասկզբին հասել են Ռոտոսթո, այնտեղ հայկական որևէ եկեղեցի չի եղել: Ռոտոսթոյի հայկական առաջին եկեղեցին 1607 թ. կառուցված Ս. Հրեշտակապետն էր: Այդ եկեղեցին 1629-ին քանդվել է, եւ Գրիգոր վարդապետի ջանքերով նույն թվականին Ռոտոսթոյի հայերը կարողացան հույներից ստանալ ուղղափառ մեկ այլ եկեղեցի՝ Ս. Հովհաննեսը: Սակայն մեկ եկեղեցին բավական չէր, ուստի հայերը կառուցեցին Ս. Փրկիչ եկեղեցին, որտեղ 1643-ին թաղվել է Գրիգոր Դարանաղցին²³: Ի վերջո, Ռոտոսթոյի հայերն իրենց հոգևոր կարիքների համար կարողացան ձեռք բերել բավարար թվով եկեղեցիներ, սակայն դա երկար ու բարդ գործընթաց էր, որը թունավորում էր հայերի եւ հույների հարաբերությունները:

Ստամբուլում եւս եկեղեցիների շուրջ վիճարանություններ ծավալվեցին. այս քաղաքի Պալաթ շրջանում գտնվող նշանավոր Ս. Հրեշտակապետ հայկական եկեղեցին ԺԷ. դարասկզբին ուղղափառ եկեղեցի էր, սակայն 1629 թ. հայերի Ս. Նիկողաս եկեղեցին մզկիթի վերածելուց հետո հայ քահանաները «ջանան առնուլ ի հոռոմոցն»: Այս պատճառով «...հոռոմքն ամենքեան կու շարժին ի պատերազմել եւ մարտնչել ընդ հայոց, չթողասցեն առնել հայք զեկեղեցին»: Ի վերջո, «...հայք կու յաղթահարեն զնոսա եւ զամենայն թիկունս լինողքն նոցա, եւ Ըռաճապ Փաշան հայոց հրամանագիր կուտայ եւ երեք չաուշ զկնի, եւ կուգան, կու բանան զեկեղեցին եւ կուտան ի ձեռս հայոց մերոց զանցս, եւ յոյժ ուրախութիւն կու լինի ի մէջ իւրեանց»²⁴ (իրականում այս «պատերազմում» հայերը ոչ թե զենքով, այլ կաշառքով եւ աղոթքով են հաղթանակում):

Նկարագրված պատմական համատեքստը հիշելիս, «Ժամանակագրության» նշյալ պատումների վերանայման դեպքում, դրանց պատմական կարեւորությունն առավել ակնհայտ կդառնա: Կասկած չկա՝ այս պատումները գրելիս Գրիգոր վարդապետը բարոյախրատական նպատակներ ուներ. ցանկանում էր զգուշացնել ընթերցողին ազահության եւ անբարեպաշտության, կեղծ «ճգնավորության» հետեւանքով առաջացած վտանգի մասին: Ավելին՝ Գրիգոր Դարանաղցին մատնանշում է իր կյանքի ամենակարևոր առաքելություններից մեկը:

²³ Ս. Փաշաճեան, Յուշամատենան Ռոտոսթոյի հայերուն (1606-1922), Պէյրուք, 1971, էջ 35-38:

²⁴ Գրիգոր Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 187:

Նա մեծ դերակատարում ունի Ռոտոսթոյի Ս. Հովհաննես եւ Պալաթո Ս. Հրեշտակապետ եկեղեցիների՝ հայերին հանձնման գործում²⁵: Բացի այդ՝ Գրիգոր Դարանաղցին ջանք չէր խնայում Նիկոմեդիայի մոտ գտնվող Արմաշու վանքի հիմնադրման համար²⁶: Վարդապետը հանդիպում է վերը հիշատակված հերձվածող Հովհաննեսին, երբ գտնվում էր Նիկեայում. «...էաք մեք յայնժամն բնակութիւն կամէաք առնուլ անդ, վասն վանատուն առնելոյ աղագաւ եւ կացաք անդ եօթն ամիս եւ շինեցաք խոց մի վերոյ գեղջին եւ կամ ունէի, որ միաբնակեաց վանս շինել վայելուչ տեղոյն»²⁷: Արքահամը՝ այդ կեղծ քահանան, գաղթական էր, որի մասին նրա ծանոթներից մեկն ասում է. «...վասն մեր կարեացն եւ պիտոյիցն երէց եւ տէր կոչեցի ի ճանապարհին»²⁸: Այդ ժամանակներում հայ գաղթականները հիմնում էին գյուղեր եւ՝ Նիկոմեդիայի, եւ՝ Նիկեայի մոտ, եւ Գրիգոր Դարանաղցին այս գյուղերում սպասավորում էր: Այս պատումի սկզբում «Ժամանակագրության» հեղինակը հստակ նկարագրել է ընդհանուր համատեքստը. «Եւ ի ժամանակիս յայս, յորում եմք ի պանդրխտութեան եւ ի նժդեհութեան յօտար երկրի, ցիր եւ ցան լինելով որպէս գփաւշի հոսեալ ի վերայ երկրի մեղաց հողմովն՝ ի յԼստամբօլ եւ յԱնատօլիս եւ ի Թրակիա, որ է յՈւռումէլս...»²⁹: Կարող ենք ասել, որ Գրիգոր Դարանաղցին երկար տարիներ փորձում էր կարգուկանոն հաստատել հիշյալ շրջանների հոգեւոր կյանքում, հիմնադրել նոր եկեղեցիներ ու սպասավորել նորեկ հայ գաղթականներին Նիկեայում, Նիկոմեդիայում, Ստամբուլում եւ Թրակիայում:

Այսպիսով՝ Գրիգոր Դարանաղցու պատումները հերձվածողների, մեղսավորների ու կեղծ քահանաների մասին ցույց են տալիս ԺԷ. դարակերպի եկեղեցական կյանքում տիրող մի խառնաշփոթ, որն ստեղծվել էր գաղթի պատճառով: Նրա «Ժամանակագրության» երկրորդ մասը, որ բարոյախրատական բնույթ ունի, պատմաբանները անտեսել են, քանի որ դրանք այնքան էլ չեն անդրադառնում քաղաքական ու եկեղեցական կյանքին: Իրականում այս պատումները պատմական վկայություններ են Արեւմտյան Հայաստանում հայկական եկեղեցական ենթակառուցվածքի զարգացման վերաբերյալ: Հայոց պատմության լուսաբանման համար այս անցուդարձը չափազանց կարեւոր է, քանի որ եկեղեցական ենթա-

²⁵ Անդ, էջ 423, 471:

²⁶ Անդ, էջ 423:

²⁷ Անդ, էջ 442:

²⁸ Անդ, էջ 478:

²⁹ Անդ, էջ 476:

կառուցվածքը հիմք դարձավ Ստամբուլի մոտակա շրջանների եւ Թրակիայի կրոնական ու մշակութային կենտրոնների ձեւավորման համար:

Գրիգոր Դարանաղցին պայքարում էր եկեղեցական խառնաշփոթի դեմ: Շրջագայելով գյուղից գյուղ՝ քարոզում եւ ուսուցանում էր, հիմնադրում նոր եկեղեցիներ ու վանքեր: Լսելով պատումներ հերձվածողների, մեղսագործների ու կեղծ քահանաների մասին՝ գրի էր առնում դրանք իր «Ժամանակագրության» մեջ, որ ընթերցողը դասեր քաղեր դրանցից ու համապատասխան հետեւություններ աներ: Ավելին՝ երբ հանդիպում էր այսպիսի մարդկանց, ժամանակ առ ժամանակ իր վարդապետական գավազանը դարձնում էր «գենք», որով հարվածում էր մեղսավորներին՝ նորեկ հայ գաղթականներին պաշտպանելու համար:

**Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրության» բնօրինակ ձեռագրի
(Երուսաղեմի Հ^Բ 1069) 179թ-181ա էջերի՝ վերծանումը****

/179թ/ Եւ խելագարեալ լուծել ետուն /180ա/ զխոնճան վարտեցն եւ միգեցուցին եւ լոյս երեւեցուցին զմէզն եւ ետուն նովաւ զերեսն՝ խաղ առնելով զնայ, եւ ելեալ սուտ Յիսուսն եւ սուտ մայրն՝ Հեծանելով ի վերայ ուսոցն, գնալով դէպ ի դուռն եկեղեցւոյն, նա դրանն ի վերայ փական կայր, նա բացաւ ինքնին եւ յետոյ մըտեալ ի ներքս, եւ ապա եկին քահանայքն: Եւ սկսաւ ալլընդալլոյ բարբանջել զուսուցեալսն ի դիւացն: Եւ ելեալ քահանայիցն եւ ժողովրդոցն գնացին ի տունս իւրոց, եւ ինքն մնալով միայն ի ներքս աղօթելոյ աղագաւ, եւ յորժամ եղեւ գիշեր, տեսի ասէ, որ Տիրամայրն նստեալ ի վերայ սեղանոյն, եւ թագն բարձրացաւ ի վեր, եւ ինքն, քան զարեգակն, պայծա[ռ]ացաւ: Եւ ասէ ցիս. Ի վե՛ր Հայեաց, եւ Հայեցայ եւ տեսի, ասէ, ել ի Տիրամօրէն սպիտակ աղաւնի մի եւ գնացեալ մօտ ի կանթեղն եւ կտուցովն առեալ ձէթ եւ բերեալ Հասոյց ի չրթունս իմ, եւ ասէ սուտ Տիրամայրն. Արդ, առի՛ր Հոգի սուտ, զի այսուհետեւ տեսիլ մեծամեծս ցուցից քեզ եւ տաց քեզ առնել նշանս եւ արուեստս: Եւ յանկարծ եկեալ սուտ Յիսուսն եւ նստաւ ընդ մօրն ի վերայ սեղանոյն, եւ ասէ ցիս. Քարոզեա՛ քահանայիցն

* Այս էջերի շարակարգը հասկանալու համար տե՛ս «Ժամանակագրութիւն», էջ 436-442:

** Բնագիրը վերծանելիս հավատարիմ եմք մնացել բնագրի ուղղագրությանը՝ ընդգծումով ներկայացնելով ուղղագրական սխալները կամ քառանկյուն փակագծերում ավելացնելով բաց թողնված տառերը, իսկ կետադրելիս առաջնորդվել ենք մերօրյա կանոններով:

եւ ժողով[ը]դոցն, զի սրբութեամբ կացցեն եւ հանապազ եկ[ե]ացեն յաղօթս, եւ քահանայքն զպատարագն սրբութեամբ կատարեսցեն զիմ խորհուրդն, որ աւանդեցի ձեզ, ժամարարն թո՛ղ միս չուտէ եւ գինի մի՛ արբցէ, եւ զայս վասն այնորիկ զգուշացուցանէ, զի հաւատացուցէ սովաւ, եւ յետոյ եւ ապա զմոլորութիւնն ի գործ ածցէ, ճշմարտութեամբ զստութիւնն հաւատարմացուցէ, որպէս նեոն առնելոց է:

Եղեւ օր մի, զի Հազշայ անուռն ոմն, գթալով ի նա վասն բոկոտն լիւնելոյն, ասելով թէ. Քեզ մեկ կօշիկ առից, զի ազանիցես: Ասէ ցնա այսոտն թէ. Երթայց, Յիսուսին իմ հարցից, եթէ ասիցէ, թէ նա առնում: Եւ գնացեալ եգիտ զիւր սուտ Յիսուսն եւ հարցեալ, նա ասացեալ է թէ. Ա՛ռ, ապա դու մի՛ ազանիր, ի գիշերի ձգեա՛ ի պողոտայն եւ դու այլ ոչ գիտենաս, թէ ով ա/180բ/ռեալ տարաւ, որ մեր վարձք լինի քեզ եւ տուողին: Տե՛ս զխորամանկութիւնն, որ կու ջանայ ամենեւին Քրիստոս կարծեցուցանել զինքն այսու օրինակաւ: Եւ դարձեալ երեւեալ ասէ թէ. Գնա՛ եւ ասա՛ քահանայիցն, որ այլ պատարագ ոչ առնեն, այդ պատարագդ հնացաւ եւ շնորհ գնաց, ես հանապազ ի միջի ձեր կամ այլ ինչ^{***} ի պէտք է ձեր պատարագն, եւ թէ ոչ, որ չէք հաւատար, հայեա՛ց եւ տե՛ս ի ժամ բաշխմամբ նշխարին, թէ զինչ կու տեսանես, եւ պշուցեալ հայէի եւ տեսի, որ մասն տայր երէցն նա ընդ մասինն, մէկ շան լակոտ բովանդակ ի բերան դնէր եւ ուտէր առող մասինն: Եւ յետ նորայ տեսի այլ Բ. (2) շունք մեծք եւ սեօք եւ երկայն ագիք նման գաւազանաց, եւ ասէ չար Յիսուսն. Այդ գաւազանաձեւ ագիք շանցդ մինն որոգայթին է, եւ միւսն զարփուզի գաւազաներն է, թերեւս նոքա յանդիմելով հա[յ]հոյէր են զինքն եւ զիւր չար հաւատացեալ Յիսուսն եւ Տիրամայրն այլ: Եւ յետ այ[ս]որիկ այլ խաղալիկ՝ կամելով առնել զինքն եւ խայտառակութեամբ հրապարակել ի մէջ եկեղեցոյն ընդ մօրն եւ ընդ կնոջն, ասելով թէ. Արի՛ առ զմայր քո եւ զկին քո եւ բե՛ր ի մէջ եկեղեցոյն, եւ առ[ա]ջի իմ եւ առաջի մօրք լե՛ր ընդ կնոջդ, եւ նախ քան զայս յառաջ ասացէր թէ. Ախտահոսութիւն արա՛ եւ այն ախտիւն օ՛ծ զքեզ եւ զերեսդ քո, զի կարի առաւել հաճոյ է ինձ, եւ արարի՛ այնպէս, որպէս ասացն: Եւ ապա զկինն եւ զմայրն խնդրեաց գալ յեկեղեցին եւ հանել մայրն եւ կինն զվարտիսն եւ ինքն եւ կանգնել ամեն յանկիւն մի եկեղեցոյն յանդիման միմեանց, եւ այսպէս արարողութեամբ խառնակիլ ընդ կնոջն, եւ ապա յետ այսր գործոյ զքեզ եւ զմայր քո եւ զկին քո յերկինս տարայց ընդ Ենովքայ եւ ընդ Եղիայի դասեցուցից: Եւ ոչ առի յանձին այնպէս յայտնի

*** Այս բառը գրված է հետագայում՝ այլ գրչի ձեռքով:

խայտառակութիւն առաջի իւր եւ առաջի մօր իմոյ եւ ասեմ. Տէ՛ր իմ Յիսուս, զիս յայտնի ճառիս կառնես առաջի քո եւ առաջի մօրն իմոյ-, զինչ հրամայեցիր, լուայ եւ անսաց ի քեզ, մէզիւ զերեսս իմ լուացի եւ ախտիւ իմով օծի զերեսս իմ եւ զանձս, եւ արդ, հրապարակագոյժ առնել զիս կամիս առաջի, Յիսուսն զայս ոչ արար, /181ա/ զոր դու առնել կամիս: Եւ ասէ չար Յիսուսն. Հալալ ամուսնութիւնն զի՞արդ ամօթ է եւ մեղք, զի արու էզ վասն այնորիկ իրաց եւ գործոցն արարի զմարդիկ եւ զամենայն շունչ կենդանի, այլ մարդոյ խառնակութիւնն ինձ հաճոյ է, քան զայլ կենդանեացն. չէ՞ գրել առաքեալն Պօղոս, թէ. Պատուական է ամուսնութիւնն, եւ սուրբ են անկողինքն: Դարձեալ հայեա՛ց եւ տե՛ս, թէ զինչ կու տեսանես, հայեցայ եւ տեսի զամենայն ժողովուրդն եկեալ ի ժամ, եւ տէր Բարսեղն, յետոյ եկեալ եւ կինն զկնի եւ մերկացեալ առաջի ժողովրդոցն յանդիման ամենեցուն եւ խառնակեցաւ, եւ իմ յոյժ ամաչեցեալ եւ անկայ յերկիր բերանս, եւ ասէ ցիս. Արի՛ կաց եւ արա՛, զոր ինչ հրամայեցի եւ օրինակաւ ցուցի քեզ, եւ ասեմ. Տէ՛ր Յիսուս, զոր ինչ արարի եւ կառնեմ, բայց զայտ անառակ գործդ ոչ կարեմ առնել: Եւ ասէ սուտ Յիսուսն այն. Եթէ զայն ոչ կամիս առնել, պատրաստեցէ՛ք զձեզ ամենայն զգուշութեամբ, որ ի գիշերիս յայսմիկ տարայց զձեզ վերացուցից յերկինս, եւ ասեմ. Տէ՛ր, մէկ քանի դրամ ունիմ, տարայց բաժանեցից կարօտելոցն, եւ ապա եկից, որպէս կամիս, այնպէս եղիցի, եւ ասէ ցիս թէ. Թո՛ղ կենա արծաթն ի վերայ քեզ, եւ ասեմ. Տէ՛ր, մի՞թէ Ենովք եւ Եղիա արծաթով վերացան յերկինս, եւ իմ ի կարծիս եղեալ ոչ կամեցայ զվերացումն զերկինս, եւ իմացեալ զխորհուրդդ իմ, այլ ոչ խօսեցաւ ընդ իս այն աւուր:

РЕЗЮМЕ

Статья начинается с краткого обзора исследований хроники Григора Даранагци. Показано, что некоторые записи были проигнорированы учеными, поскольку они включали в себя различные истории о фальшивых священниках, грешниках и еретиках. Согласно утверждениям автора, эти истории имеют ценность если их рассматривать в историческом контексте. Накануне 17-ого века армянские и османно-турецкие первоисточники описывают “Великое отступление” от войны, восстания, голода, неистовствующей инфляции и даже от внезапного распространения каннибализма в восточных регионах империи в более безопасные территории Западной Анатолии, Фракии, и даже в Египет, Крым и в Польшу. В некоторых районах Западной Анатолии и Фракии не существовало никаких армянских общин до начала 17-ого века, т.е. и армянской духовной инфраструктуры. И прибыв-

шие армянские беженцы сами учреждали церкви, монастыри и деревни. Автор полагает, что вышеупомянутые истории это плод времени духовного хаоса среди беженцев прибывших в Западную Анатолию. Хотя разные фрагменты истории не могут считаться достоверными по отдельности, все вместе они описывают переходный период, когда фальшивые священники и "еретики", могли привлечь последователей среди армянских беженцев до установления церковного порядка. Это переломный момент в истории Армении, потому что последующий подъем западно-армянской культурной, интеллектуальной и религиозной жизни в 18-19-ых веках происходят в населенных пунктах основанных беженцами в 17-ом веке. К статье прилагаются транскрипции отсутствующие из страниц Хронографии Григора Даранагци. Эти страницы были исключены из публикации Хроники 1915 года из-за их несообразного и скандального характера.

SUMMARY

This article begins with a brief summary of research on the Chronicle of Grigor Daranaghtsi. It notes that much of the chronicle has been ignored by scholars because it consists of diverse stories about fake priests, sinners, and heretics. The author argues that these stories are informative if considered in their historical context. At the beginning of the 17th century, Armenian and Ottoman Turkish sources describe a "Great Flight" from war, rebellion, famine, rampant inflation, and even outbreaks of cannibalism in Eastern parts of the Empire to more secure territories in Western Anatolia, Thrace, and even as far as Egypt, Crimea, and Poland. In some localities in Western Anatolia and Thrace, there had been no Armenian communities until the beginning of the 17th century, and thus, no Armenian ecclesiastical infrastructure. The new-come Armenian refugees had to establish churches, monasteries, and villages. The author argues that the above-mentioned stories are a product of a time of ecclesiastical chaos among the refugees arriving in Western Anatolia. While the stories must be taken with a grain of salt, together they seem to describe a transition period in which cult leaders, fake priests, and "heretics" could gain followers among the Armenian refugees before the establishment of ecclesiastical order. This is a critical turning-point in Armenian history because the subsequent rise of Western Armenian cultural, intellectual, and religious life in the 18th and 19th centuries would take place in population centers settled by the 17th century refugees. Appended to the article are transcriptions of missing pages from the Chronicle of Grigor Daranaghtsi. These pages were omitted from the 1915 publication of the chronicle due to their outlandish and scandalous nature.

